ԱՇՈՏ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

ՍԱՂՄՈՍԱՎԱՆՔԻ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բանալի բառեր – *Սաղմոսավանք, Գրիգոր Լուսավորիչ, Վարդան Արևելցի, Զաքարիա Ագուլեցի, Արագածի սուրբ Նշան, բարձրագույն, դպրոց, քրիստոնեական մասունք*

Միջնադարում յուրաքանչյուր վանքի հպարտությունը եղել են իր խնկաբույր հարկերի ներքո քրիստոնեական բազմապիսի սրբությունները, մասունքներն ու նշխարները, որոնցով նրանք նույնիսկ ճանաչվել, կոչվել և հռչակ են վայելել: Սաղմոսավանքն այդ առումով բացառություն չէ, դեռ ավելին՝ Հայաստանում դժվար գտնվի մի վանք, որն իր սրբությունների քանակով մրցակցի Քասաղի անդրնդախոր կիրճի ամենախոր հատվածի աջակողմյան ձորափին վեհորեն խոյացող հոյակերտ այդ մենաստանի հետ:

Սաղմոսավանքը վերազարթոնքից հետո (1215 թ.) հռչակվել է սեփական մատենադարանի հարուստ հավաքածուով, մագաղաթյա, երկաթագիր, հազվագյուտ ձեռագրերով՝ այդ առումով համեմատվելով Կիլիկիայի Հայոց թագավորության մայրաքաղաք Սսի գրադարանի հետ[1]: Այդ հարստությունը մեծ հոգածությամբ ու երկյուղածությամբ երկար դարեր պահվել ու պատվել է նշանավոր այդ ուխտի սրբարաններում:

Սաղմոսավանքի սրբությունների և մասունքների մասին մեզ գրեթե ամբողջությամբ առաջինն իրազեկում է այդ մենաստանին քաջածանոթ Վարդան Արևելցին, որը 1267 թ. Այրարատ աշխարհի կողմնապետ Քուրդ Ա իշխանաց իշխանի հովանավորությամբ Խոր Վիրապի վարդապետական բարձրագույն դպրոցը վերաբացեց Վաչուտյանների հոգևոր կենտրոնում: Պատմիչը հայտնում է, որ «եւ ի յոտն Արագածոյ Սաղմոսավանքն, ուր կայ **օձահալած սուրբ Նշանն** եւ **Արագածայ սուրբ Նշանն** եւ Յոհանավանքն, ուր կայ **վարշամակն Քրիստոսի**»[2]: Մեկ այլ տեղ Վարդան վարդապետը նշում է, որ Սաղմո-

---

[1] Տե՛ս **Իշխանյան Ռ.**, Հայ մատենագիտության պատմություն, պրակ Ա, V-XVII դարեր, Երևան, 1964, էջ 53:

[2] «Աշխարհացոյց Վարդանայ վարդապետի», Բարիզ, 1960, էջ 15: Հիսուս Քրիստոսի վարշամակի հարցը քննարկման այլ նյութ է, բայց բացառված չէ, որ այն Ջենովայի հայոց Ս. Բարդուղիմեոս եկեղեցում (XIV դ.), որտեղ այսօր էլ այն պահվում է, հայտնված լինի Հովհաննավանքից: Այստեղ է պահվել նաև ս. Ստեփանոս Նախավկայի աջը: Այն ս. ուխտին է նվիրել Սյունյաց Գրիգոր թագավորի (1094-1166) դուստր Շուշիկը, որը Բաղաբերդի անկումից հետո (1170 թ.) հալածական եկել է Հովհաննավանք, վախճանվել ու թաղվել այդտեղ (տե՛ս արձանագրությունը՝ **Ղաֆադարյան Կ.**, Հովհաննավանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1948, էջ 77): Ըստ Դավրիժեցու՝ մոտավորապես 1607 թ. Կարբիում հաստատված

սավանքում է «եւ սուրբ անապատն Հրեշտակաբնակ ու կայ **սուրբ Նշանն Արագածոյ**, եւ **Օձահալած սուրբ Նշանն**, որ ունի մասն ի Կենաց Փայտէն արիւնաներկ, եւ առնէ նշանս մեծամեծս ի յօձահարս եւ յամենայն պատահարս եւ **աստուածընկալ սուրբ Նշանն, Գռուզ սուրբ Նշանն, Տէրունական սուրբ Նշանն**, եւ **սուրբ Յակոբայ Մծբնայ հայրապետի աջն**, եւ **սուրբ Յակոբայ Տեառնեղբօր մատն եւ գերեզմանն Ականատեսն սուրբ վարդապետին Գրիգորի**…»[1]: Այսպիսով, իրազեկ պատմիչի վկայությամբ Սաղմոսավանքում XIII դ. եղել է ութ սրբություն, որից հինգը՝ սբ. Նշանի տեսքով, այն է՝ խաչի:

Այդ բազմահավաք սրբություններից առաջինը ***Արագածի սուրբ Նշանն է***, որը կապված է ս. Գրիգոր Լուսավորչի անվան հետ: Հայտնի է, որ կյանքի վերջին շրջանում Գրիգոր Լուսավորիչը հայրապետական աթոռը հանձնել է իր կրտսեր որդուն՝ Արիստակեսին, իսկ ինքը հեռացել Արագած լեռը՝ ճգնակեցության: Սաղմոսավանքի կոնդակում վկայություն կա առ այն, որ Լուսավորիչն իր հետ ուներ «զմասն ի կենաց փայտէն», սուրբ առաքյալների և ՍԲ Կարապետի (Հովհաննես Մկրտչի) նշխարներ, որոնցից նա պատրաստել էր «սոսկալի ՍԲ Նշանն, որ ասի Արագածի ՍԲ Նշան»:

Մագաղաթյա կոնդակում այնուհետև նկարագրվում է, թե ինչպես ՍԲ Լուսավորիչը ամռանը բնակվում էր ՍԲ Արագածում, իսկ ձմռանը՝ Սաղմոսավանքի կիրճի իր ձեռամբ հիմնադրված անապատում, մինչև որ Տրդատ արքայի ու Հայոց մեծամեծերի թախանձանքով նա իջնում է լեռան վրայից, գալիս վերոհիշյալ հրեշտակաբնակ անապատի մենաստանը և այնտեղ տեղադրում Արագածի սուրբ նշանը. «Եւ եդիր անդ զՍԲ Նշանն Արագածի ի պատիւ տեղւոյն եւ ՍԲ տաճարացն»[2]:

Հայտնի հայ վաճառական ու ժամանակագիր Զաքարիա Ագուլեցին (1630-1691)[3] հայտնում է, որ 1672 թ. հուլիսի 15-ին՝ կիրակի օրը՝ Վարդավառին, այսինքն՝ Հիսուս Քրիստոսի Պայծառակերպության տաղավար տոնին «դարձեալ գնացի Սաղմոսավանք, Լուսաւորչի իւր ձեռամբ շինած խաչն համբուրեցի»[4]:

XIX դ. առաջին կեսին Հովհ. Շահխաթունյանցն Էջմիածնի Մայր Աթոռում պահվող սրբությունների թվարկման շարքում անդրադառնում է Արագածի սբ. Նշանի պահարանին[5]: Այն, ինչպես թիկունքի մակագրությունն

ջալալի Թոփալ Օսման փաշայի հրոսակները ոմն Աբդուռահման Մուսլիմի գլխավորությամբ թալանել են Հովհաննավանքը՝ իրենց հետ տանելով այդ մենաստանի սրբությունները: Տե՛ս **Առաքել Դավրիժեցի**, Գիրք պատմութեանց, աշխ. Լ. Խանլարյանի, Երևան, 1990, էջ 104:

[1] «Աշխարհացոյց Վարդանայ վարդապետի», էջ 26-27:

[2] Տե՛ս Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռագիր թիվ 8061:

[3] Տե՛ս **Հովհաննիսյան Ա.**, Զաքարիա Ագուլեցին և իր ժամանակը: Հրատարակության պատրաստեց Վարուժան Պողոսյանը, Երևան, 2017, էջ 7:

[4] «Զաքարիա Ագուլեցու օրագրությունը», Երևան, 1938, էջ 108:

[5] Տե՛ս **Շահխաթունեանց Յովհաննէս եպիսկոպոս**, Ստորագրութիւն Կաթուղիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, Ս. Էջմիածին, Երևան, 2014, էջ 50-51:

է վկայում, պատրաստել է Սաղմոսավանքի շինարար առաջնորդ Գաբրիել վրդ. Կարբեցին (1656-1661, 1662-1674):

Սաղմոսավանքի երկրորդ սրբությունը ***Օձահալած սուրբ Նշանն է***: Վարդան Արևելցու վերը մեջբերված վկայությունից կարելի է կռահել, որ այն նույնպես պատրաստել է Գրիգոր Լուսավորիչը: Այն պարունակել է Հիսուսի Խաչափայտի մաս և ունեցել օձեր վանելու ու պատուհասներից զերծ պահելու աստվածահրաշք զորություն: Առհասարակ, Սաղմոսավանքի կողմերում, հատկապես խոր կիրճում շատ են օձերը: Գրող, անձավախույզ Է. Սարգսյանն իր գրքում զետեղել է ժողովրդական մի ավանդապատում. «Երբ օձը մարդուն կծում է, երկուսն էլ շտապում են Սաղմոսավանք: Եթե մարդն է շուտ տեղ հասնում, օձն է սատկում, իսկ եթե օձն է տեղ հասնում, մարդն է մահանում»[1]:

Սաղմոսի վանքի երրորդ սրբությունը ***Աստուածընկալ սուրբ Նշանն է***: Աստվածընկալ նշանակում է աստվածակիր, այսինքն՝ Նշան, Խաչ, որ պարունակում է Հիսուս Քրիստոսի մասունք: Քանի որ Գրիգոր Լուսավորիչն Արագածում ճգնելիս իր մոտ ունեցել է կենաց փայտի (Հիսուս Քրիստոսի խաչափայտի) մաս, հետևապես պետք է ենթադրել, որ այդ խաչը նույնպես նա է պատրաստել:

Հովհ. Շահխաթունյանցը Մայր Աթոռում պահվող սրբություններից նկարագրում է «տապանակ փոքրադիր արծաթի հարթ շինուածով. սա անուանի Աստուածընկալ Սուրբ Նշան,– բայց սխալ ենթադրում,– գուցէ իցէ Աստուածընկալ վանացն ի Նիգ գաւառի»[2]:

Սաղմոսավանքի չորրորդ սրբությունը ***Գռուզ սուրբ Նշանն է***: «Գռուզ» բառն ըստ բառարանային ստուգաբանությունների նշանակում է «գանգուր», «ընկույզի միջուկ»[3]: Կարելի է ենթադրել, թե այդ խաչի թևերն ունեցել են ալիքաձև ոլորուն տեսք, բայց հակված ենք կարծելու, որ «գռուզ»-ը լատիներեն crux (խաչ) բառի արտասանության հայկական խոսվածքային ձև է: Հնարավոր է՝ այն կաթոլիկ խաչ է եղել (Հիսուս Քրիստոսի պատկերով)՝ Սաղմոսավանքում հայտնված հայ-լատին եկեղեցական հարաբերությունների շնորհիվ:

Հինգերորդ սրբությունը ***Տէրունական սուրբ Նշանն է***: Մեր պրպտումներն այս խաչը գտնելու ուղղությամբ հանգեցրին հետևության, որ դա այն բարձրարվեստ, գեղաքանդակ, հատած կոնաձև խաչքարն է, որն ագուցված է Սաղմոսավանքի գավթի վեցասյուն ռոտոնդայի ներքևի երդիկի տասներկունիստանի վեղարի արևմտահայաց, կենտրոնական նիստին՝ ներքնամասում հոչակավոր Վաչե Ա Վաչուտյան Ամբերդցու հետևյալ մակագրությամբ.

---

[1] **Սարգսյան Է.**, Քարանձավները բացում են իրենց գաղտնիքները, Երևան, 1989, էջ 119-120:

[2] **Շահխաթունյանց Յովհաննէս եպիսկոպոս**, նշվ. աշխ., էջ 51:

[3] Տե՛ս «Նոր բառգիրք Հայկազեան լեզուի» հ. 1, Վենետիկ, 1836, էջ 585, **Ղազարյան Ռ., Ավետիսյան Հ.**, Միջին հայերենի բառարան, հ. Ա, Երևան, 1987, էջ 158:

ՍԲՆ ՀԱԿՈԲԻՆԱԿԱՆ ՎԱՉԷԻ ԼԵՌ ՔԱՒԱՐԱՆ

ՍԲ ՆՇԱՆ ՏԷՐՈՒՆԱԿԱՆ, ՎԱՉԷԻ ԼԵ՛Ր ՔԱՒԱՐԱՆ[1]:

Այս հինգ սրբություններով ավարտվում է Սաղմոսավանքի պատվելի, մեծարելի խաչերի շարքը:

Վեցերորդ սրբությունը ***Սուրբ Յակոբայ Մծբնայ հայրապետի աջն է***: Ավելորդ չենք համարում հիշեցնել, որ IV դ. համաքրիստոնեական սուրբ Հակոբ Մծբնացին բարձրացել է Արարատ լեռը՝ «Նոյյան տապանը գտնելու, բայց Մասիսի լանջերին հոգնել է և ննջել: Ըստ ավանդության, Աստուծո հրեշտակը նրան մատուցել է Նոյյան տապանից փայտի կտոր: Այնտեղ, որտեղ Հակոբ Մծբնացին հրեշտակից ստացել է Նոյյան տապանի կտորը, հիմնվել է Ակոռիի Ս. Հակոբ վանքը. այստեղ էլ պահվել են Հակոբ Մծբնա հայրապետի մատի ոսկրը և Նոյյան տապանի փայտի կտորը՝ միմյանց շղթայով ամրացված (այժմ Հակոբ Մծբնացու աջի հետ այդ փայտի կտորը պահվում է Ս. Էջմիածնի վանքում)»[2]:

Ղ. Ալիշանի իրազեկմամբ՝ «Յիշեալ մասն նշխարաց սրբոյ Մծբնացւոյն պահի արդ յէջմիածին, յաջաձև պահարանի, յորում գրեալ է յամի 1658. «Արդ ես Յակոբ կաթողիկոս Ջուղայեցի՝ յաջորդեալ յաթոռ սրբոյն Լուսաւորչի ի Ս.Էջմիածին, տեսեալ զԱջ սրբոյն Յակոբա Մծբնայ հայրապետին յիշատակ ի դուռն Սաղմոսավանաց, բայց էր կարի խրթին եւ ի խորտակեալ պահարան մի, նորոգեցի վայելուչ յորինուածքով եւ եդի յիշատակ եւ ի նոյնում վանս Սաղմոսաց, անեղծանելի արձան ի թվիս Հայոց ՌՃԷ ամին»[3]:

Անցյալում այնքան խորն է եղել այդ համաքրիստոնեական սրբի աջի մեծարանքը, որ Սաղմոսավանքի համալիրի Ս. Աստվածածին եկեղեցի-գրատունը XVI կեսին կոչվել է նաև ՍԲ ԱՋԻՆ ՅԼԱՅԿԼՈՅԼԱՅ (այստեղից ենթադրելի է, որ սրբությունը պահվել է հենց այդ պաշտամունքային շինությունում), իսկ ս. ուխտի միաբանները՝ ԵՐԿՐՊԱԳԱՒՂՔ ՍԲ ԱՋԻՆ ՅԱԿՈԲԱՅ: Անգամ աջին է նվիրաբերվել խոշոր բնակավայր՝ Գեղարքունիքի Գավառ գյուղաքաղաքը[4]:

---

[1] **Պետրոսյանց Վ.**, Սաղմոսավանք // «Էջմիածին», 1981, թիվ Է, էջ 56, նաև՝ մեր դաշտային օրագիր: Վ. Պետրոսյանցն այս հիշատակությունը վերագրում է Վաչե Բ Վաչուտյանին, մինչդեռ, ըստ մեր կողմից ընդօրինակած նորահայտ արձանագրության, թե՛ գավթի կառուցողը և թե՛ այդ հիշատակագրության հեղինակը Վաչե Ա Վաչուտյանն է: Տե՛ս **Մանուչարյան Ա.**, Քուրդ Ա Վաչուտյանի երկու արձանագրության վերծանություն // «Բանբեր Երևանի համալսարանի» (այսուհետև՝ «ԲԵՀ»). «Հայագիտություն», 2015, թիվ 2, էջ 48, *նույնի*, Սաղմոսավանք, Сагмосаванк, Saghmosavank, Երևան, 2015, էջ 41, տողատակ:

[2] «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Երևան, 2002, էջ 521:

[3] **Ալիշան Ղ.**, Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 164:

[4] **Մանուչարյան Ա.**, Գավառ քաղաքի պատմության նորահայտ քարեղեն էջը // «ԲԵՀ». «Հայագիտություն», 2016, թիվ 2, էջ 51-58:

Սաղմոսավանքի յոթերորդ սրբությունը **Սուրբ Յակոբայ Տեառնեղբօր մատն է**:

Հակոբ Տյառնեղբայրն աստվածաշնչյան սուրբ է, Հիսուս Քրիստոսի «եղբայրներից» մեկը: Ըստ ավանդության՝ եղել է Երուսաղեմի առաջին եպիսկոպոսը: Նրա կապակցությամբ Շնորհք արքեպիսկոպոսը գրում է. «Այս Յակոբոսին յիշատակն ալ Զեբեդեան Յակոբոսին պէս, սերտօրէն կապուած է մեր եկեղեցիին հետ: Նահատակութենէն յետոյ իր մարմինը բերուած ու թաղուած է իր տան պարտեզին մէջը, ուր թաղուած էր նաև Յակոբոս առաքեալին գլուխը: Այն տան տեղւոյն վրայ շինուած է Երոսաղէմի Պատրիարքութեան մայր տաճարը, որ այս իսկ պատճառով կը կոչուի «Սրբոց Յակոբեանց Տաճար», այսինքն՝ «Սուրբ Յակոբներու Եկեղեցին»[1]:

Չի բացառվում, որ ս. Հակոբ Տյառնեղբոր մատը Սաղմոսավանքում հայտնված լինի Վաչեի կամ Քուրդի՝ Երուսաղեմ կատարած ուխտագնացության արդյունքում:

Սաղմոսավանքի ութերորդ սրբությունն է՝ ***Գերեզմանն Ականատես սուրբ վարդապետին Գրիգորի***: Գրիգոր Ականատես վարդապետը եղել է Վաչուտյանների շնորհիվ Սաղմոսավանքի վերազարթոնքի անդրանիկ առաջնորդը:

Նա Ականատես է կոչվում այն պատմության պատճառով, որ մեզ հայտնում է Սիմեոն Երևանցի կաթողիկոսը (1763-1780), թե երբ ս. Գրիգոր Լուսավորիչը ճգնում էր Արագած լեռան գագաթին «եւ այնտեղ էր անցկացնում բազում օրեր, որտեղ և կառուցեց մի փոքրիկ տաճար՝ մի վեմի ներքեւում, հանուն ամենասուրբ երրորդութեան: Եւ այնտեղ կախ տվեց մի կանթեղ՝ առանց պարանի եւ լցրեց այն իր արտասուքով եւ խնդրեց Աստծուց, որպեսզի երկնային լույսով վառելով անշեջ մնա մինչեւ աշխարհի վախճանը: Որը եւ եղավ ըստ խնդրածի, որ մնում է մինչև այսօր՝ ի փառս Աստծու եւ ի պարծանս իր ծառայի: Որը եւ երկար ժամանակ բաց աչքով տեսավ Գրիգոր ականատեսը, որի մասին հետո պիտի խոսենք, որ եւ դրա համար կոչվեց Ականատես»[2]:

Այդ պատմությունն առավել մանրամասն ներկայացված է Սաղմոսավանքի կոնդակում: Այդտեղ նշվում է, որ Սաղմոսավանքի հրաշալի հորինվածքով Ս. Սիոն մեծ եկեղեցու կառուցման ավարտից հետո (1215 թ.) Վաչե Վաչուտյանը խնդրում է Գրիգոր վարդապետին, որ նա աղաչի Աստծուն՝ ցույց տալու նշանը, այսինքն՝ աներևույթ կանթեղը: Տաճարի՝ Ս. Սիոնի նավակատիքի ժամանակ պատարագիչ Գրիգոր վարդապետը հազարավոր բազմության հետ աղիողորմ արտասուքներով, ի խորոց սրտի հառաչանքներով ամենագութ Աստծուն խնդրում է, և Ողորմածը կատարում է այդ խնդրանքը. երեկոյան ժամին ծագեց լույս երկնային՝ «որպէս մեծին Եղիայի՝

---

[1] **Գալուստեան Շնորհք արքեպիսկոպոս**, Աստուածաշնչական սուրբեր, Երևան, 1997, էջ 204:

[2] **Սիմեոն Երևանցի**, Ջամբռ, Երևան, 2003, էջ 402-403:

ի քորէբ լերինն՝ հողմով և շարժմամբ յայտնեալ ի պակուցումն ՍԲ մարգարէին: Նմանապէս շարժմամբ և փայլատակմամբ իջեալ լուսոյն ի հիացումն ամենեցուն» երևաց նշանը: Բոլորը Գրիգոր Ականատեսի գլխավորությամբ փառաբանեցին Աստծուն[1]:

Ըստ Ղ. Ալիշանի՝ «տապան նորա յեկեղեցւոջ վանացս ցարդ ուխտատեղի է, քանզի համարի նա և բերող առուին Աշտարակայ»[2]:

Գրիգոր Ականատեսի գերեզմանը, մեր դիտարկմամբ, այն մեծ, գորշավուն տապանաքարն է, որ գտնվում է Սաղմոսավանքի գավթի հարավային պատի մոտ՝ դրսից և Ս. Աստվածածին եկեղեցի-գրատան արևմտյան շքամուտքի առջևում. մեկ այլ՝ մարմարյա հուշաքար դրված է վանքի նշանավոր առաջնորդ Հովհաննես Կարբեցի ճգնավոր եպիսկոպոսի (1638-1656) շիրիմի վրա՝ Ս. Գրիգոր Լուսավորիչ մատուռի նախասրահում:

Երրորդ տապանաքարը՝ հարթ, քառակուսիանման, գտնվում է Ս. Սիոն եկեղեցու հյուսիսարևելյան մասում՝ դրսից որմնափակ խաչքարի առջևում: Դա, ըստ արձանագրության, 1309 թ. տեղադրել է Թադևոս քահանան իր ծնողների գերեզմանի վրա: Այլ երևելի թաղումներ թե՛ վանքում և թե՛ նրա անմիջական հարևանությամբ չեն նկատվում՝ չհաշված մեկ-երկու անշուք սալատապաններ, որ նշմարվում են գավթի հյուսիսարևմտյան անկյունում:

Գրիգոր Ականատեսի գերեզմանի մեր տեղորոշումը կարծես հաստատվում է Պ. Պռոշյանի «Կռվածաղիկ» վեպի (1878) հետևյալ հղմամբ, որ մեջբերում ենք ըստ Վ. Դևրիկյանի պրպտումների. «Սաղմոսավանքի եկեղեցու աջակողմյան դասումն է թաղված Ականատեսը, և ամեն մի աշտարակցի, եկեղեցի մտնելուս, անպատճառ մի «ողորմի» տալիս է ու համբուրում նրա գերեզմանը»[3]: Պ. Պռոշյանը նաև ավելացնում է, որ «նրա երկայն և սրամեջք տապանագիրը մինչև այսօր անվնաս մնացել է»[4]: Այստեղից հասկանալի է, որ տապանաքարի հյուսիսային կամ հարավային երկարավուն նիստին փորագրված է եղել ուռուցիկ տառերով (ելնդագիր) արձանագրություն: Եթե նույնիսկ այդպիսի գիր եղել է այդ տապանաքարին (նման ուրիշ գրություն Սաղմոսավանքում մեզ առհասարակ հայտնի չէ), ապա այն այսօր չի երևում, և ոչ էլ իմաստ ունի բացելու եղանակով ստուգել, քանի որ շիրմաքարի շուրջբոլորը՝ սալահատակով խնամքով հավասարեցված է գետնի մակերևույթին:

Հետագա դարերի մատենագրական սկզբնաղբյուրներում քանիցս հիշատակվում են Սաղմոսավանքի սրբությունները: Այսպես, 1496 թ. ընդօրինակված Ավետարանի հիշատակարանում գրիչ Ովանես աբեղան նշում է, որ Սուրբ գրքի ընդօրինակումն սկսել է Մաքենիսում, որտեղ վերջացրել է Ա գլուխը, իսկ ավարտին հասցրել Սաղմոսավանքում՝ «ընդ հովանեաւ սուրբ

---

[1] Տե՛ս Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռագիր թիվ 8061:

[2] **Ալիշան Ղ.**, նշվ. աշխ., էջ 163:

[3] **Դևրիկյան Վ.**, Լուսավորչի կանթեղը, Ս. Էջմիածին, 2001, էջ 25:

[4] **Պռոշյան Պ.**, Երկերի ժողովածու, հ. 3, Երևան, 1963, էջ 129:

Սիոնիս և **սուրբ նշանացս**, որ աստ կան հաւաքեալ»[1]:

Գլաձորում Եսայի բաբունապետի ուսուցչապետության տարիներին (1284-1338) ընդօրինակված ժողովածուի, որ հիմնականում ընդգրկում է Մովսես Քերթողի (VII դ.) «Գիրք պիտոյից» աշխատությունը, հետագայի հիշատակարանում գրված է. «Յիշատակ է սուրբ տառս Պիտոյից Սաղմոսավանուց **սոսկալի Սուրբ Նշանացն**, ի յոտն Արագածու, ի թվին ՌԲ (1553)-ն»[2]:

Առաքել Դավրիժեցին (≈1590-1670) իր «Պատմութեան» ԻԱ (21-րդ) գլխում, պատմելով նշանավոր Սարգիս եպիսկոպոսի մասին, գրում է, որ նա, գնալով Սաղմոսավանքի մեծափառ ուխտը, «լեալ սպասաւոր **բազմահաւաք սրբութեանց**, որք կան անդր»[3]:

Ըստ Ղ. Ալիշանի՝ Հովհաննես եպս. Կարբեցու առաջնորդության տարիներին (1638-1656) Թովմա վարդապետ Վանանդեցին, որ ներբողներ է գրել Հայոց վանքերի մասին, մեկն էլ ձոնել է Սաղմոսավանքին.

«Սաղմոսավանք առասացեալ,
Արագածու սուրբ Նշան լեալ.
Օձահալածն անդ կայ եդեալ,
Աստուածընկալն երկրրպագեալ:
Սուրբ Յակոբայ աջրն պատուեալ
Որ Մծբնայ առաջնորդեալ.
Միւս Յակոբայ ճկոյթ կալեալ,
Որ Տեառն եղբայր էր անուանեալ»[4]:

Ճիշտ է, այս բանաստեղծության մեջ Սաղմոսավանքի ոչ բոլոր սրբություններն են հիշատակված, բայց ըստ վերը հղված սկզբնաղբյուրների՝ տեսանք, որ դրանց թիվը եղել է ութ: Սակայն Սաղմոսավանքի կալվածագրերից մեկում՝ գրված 1742 թ., հողի առուվաճառքի գործարքը հաստատուն մնալու համար վճռվում է պայմանագիրը խախտողներին սպառնալ նաև վանքի «Թ (9) սոսկալի սուրբ նշանացն»[5]: Ստացվում է, որ եղել է նաև իններորդ սրբությունը: Դա, ինչպես ենթադրել է տալիս Զաքարիա Ագուլեցու՝ Սաղմոսավանքում իր գտնվելու մասին նկարագրող խոսքերի «**և այլ սրբոց գերեզման համբուրեցի**» հատվածը[6], գերեզման է, քանի որ մինչև XVII դ. կեսը որպես գերեզման-սրբատեղի հիշատակվում է միայն Գրիգոր վարդապետ

---

[1] «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն Գ, կազմեց Լ. Խաչիկյան, Երևան, 1967, էջ 226:

[2] «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի», հ. Ե, Երևան, 2009, էջ 882:

[3] **Առաքել Դավրիժեցի**, նշվ. աշխ., էջ 215:

[4] **Ալիշան Ղ.**, նշվ. աշխ., էջ 164:

[5] «Կալվածագրեր և տնտեսական այլ գործարքների վերաբերյալ արխիվային վավերագրեր», պրակ I, կազմեց Հար. Աբրահամյան, Երևան, 1941, էջ 64:

[6] «Զաքարիա Ագուլեցու օրագրությունը», էջ 108:

Ականատեսի ննջարանը: Կարծում ենք, որ երկրորդ գերեզմանը, որն ուշ միջնադարում է հավելել Սաղմոսավանքի ութ սրբությունների շարքը որպես իններորդ, Հովհաննես եպս. Կարբեցի ճգնազգյաց առաջնորդի շիրիմն է վանքի Ս. Աստվածածին եկեղեցի-գրատան հյուսիսարևելյան պատի տակ: Մարմարյա տապանաքարի արևելյան եզրին 1669 թ. եպիսկոպոս Հովհաննեսի հիշատակի համար կանգնեցվել է խաչքար: Առհասարակ, տակավին Սահակ Պարթևի կանոնախմբի 24-րդ կանոնով արգելվել է եկեղեցու ներսում թաղում կատարելը[1]: Սակայն վանքի շինարար առաջնորդ Գաբրիել վարդապետ Կարբեցին, իր հորեղբորն այդտեղ թաղելով, նկատի է ունեցել այն, որ այդ վայրը թեև համարվում է Ս. Աստվածածին եկեղեցու մաս, բայց ժամանակին եղել է Ս. Գրիգոր Լուսավորիչ մատուռի նախասրահ, հետևապես եղբորորդին ոչ մի կանոն չի խախտել:

Այսօր, բարեբախտաբար, Սաղմոսավանքի սրբությունների գերակշիռ մասը հուսալիորեն պահպանվում է թե՛ տեղում և թե՛ Մայր Աթոռում՝ խորհրդանշելով այդ վաղեմի, լուսավորչաշեն սրբարանի միջնադարյան փառքն ու բարձր հեղինակությունը:

Արագածի ս. Նշան

Տերունական ս.Նշան

Ս. Հակոբ Մծբանացու աջը

[1] Տե՛ս «Կանոնագիրք հայոց», Ա, աշխ.՝ Վ. Հակոբյանի, Երևան, 1964, էջ 380-381:

Գրիգոր Ականատեսի ենթադրյալ գերեզմանը

Հովհաննես եպս. Կարբեցու գերեզմանի վրայի խաչքարը

Ашот Манучарян – ***Святыни средневекового Сагмосаванка***

В средние века Сагмосаванк был известен не только своей высшей духовной школой, богатой библиотекой, но и христианскими святынями, которые хранились под сводами этого монастыря. Их было девять, из которых четыре креста, один хачкар, мощи двух святых (Длань св. епископа Акопа из Мцбины, Палец св. Акопа Брата Господня) и две могилы, которые принадлежали двум известным главам епархии монастыря. Часть этих святынь до сих пор существует, некоторые находятся в Святом Престоле Эчмиадзина, а некоторые – на территории монастыря.

Ashot Manucharyan – ***Sacred Things of Medieval Saghmosavank***

Medieval Sagmosavank was famous not only for its high school and rich library, but also for Christian sacred objects preserved under its floors. There were nine of them, four of which were crosses, one was a khachkar (a cross-stone), and two were relics of saints (the right hand of St. Hakob Mtsbinatsi and the finger of St. Hakob's Brother). There were also two graves that belonged to two well-known leaders of the monastery. Today, some of them are kept in the Holy See of Echmiadzin, and the others are preserved on the territory of the monastery.

Ներկայացվել է 24.01.2019
Գրախոսվել է 12.02.2019
Ընդունվել է տպագրության 25.06.2019